

**«COVID 19 – ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ԽՈՑԵԼԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ»  
ԾՐԱԳԻՐ**

**ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԽՈՑԵԼԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ  
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ COVID 19 –Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

«ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության կողմից իրականացվում է «COVID-19՝ նոր մարտահրավերներ էկոլոգիապես խոցելի համայնքներում» ծրագիրը, որի նպատակն է նպաստել էկոլոգիապես խոցելի համայնքների բնակչության սոցիալ-բնապահպանական իրավունքի պաշտպանությանը COVID-19-ի հետ կապված պայմաններում: Ծրագրի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն և Ներքին Գետաշեն համայնքների բնակչության համար պատրաստվել են տեղեկատվական փաթեթներ, որտեղ ներառված են բնակիչների համար COVID-19-ով պայմանավորված իրազեկման թերթիկներ, ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակի մեղմացմանն ուղղված ՀՀ կառավարության սահմանած միջոցառումների սեղմագրերը:

Բնակիչների և համայնքների ղեկավարների համար կազմվել է Ծրագրի խնդիրներին առնչվող հարցաշար, ինչի պատասխանների, անցկացրած հարցազրույցների, ԷկոԼուրի՝ նախկինում համայնքների բնապահպանական և սոցիալական ոլորտին վերաբերող խնդիրների լուծման գործընթացի ուսումնասիրությունների վերլուծությունն էլ հիմք է հանդիսացել սույն հաշվետվության համար:

Երևան, 2020թ.

## **ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԼՈՒԲԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Համայնքների ընդհանուր խոցելի կողմերն են՝ մեծ թվով սոցիալապես անապահով ընտանիքների առկայություն, աշխատատեղերի բացակայություն, աղքատությունը, բնակիչների անվճարունակություն, համայնքների ոռոգման ջրի պակաս, աղբահանության անբավարար վիճակ, COVID-19-ով պայմանավորված առողջապահական, կրթական, սոցիալ-հոգեբանական, դեմոգրաֆիական նոր մարտահրավերների հաղթահարման դժվարություններ: Գյուղերն ունեն ոռոգման ջրի խնդիր: Վերին Գետաշենում 350 հա գյուղատնտեսական նշանակության հող բացարձակ անջրդի է, չի մշակվում Արգիճի գետում բավարար ծավալի ջուր չլինելու պատճառով: Համայնքի մի խումբ բնակիչներ տարածայնություն ունեն Արգիճի գետի վրա կառուցված «Արգիճի» ՓՀԵԿ-ը շահագործող «Հիդրոկոորպորացիա» ՓԲԸ-ի հետ՝ կապված ոռոգման ջրի անբավարարության, բնակիչների հողատարածքների աղտոտման և ընկերության տեխնիկայով բնակիչների գյուղատնտեսական նշանակության հողերի փչացման հետևանքով նրանց պատճառված վնասների չփոխհատուցման հարցերի հետ:

Ներքին Գետաշենի 100-ից ավելի հեկտար հողատարածքներ մնացել են անջրդի ոռոգման ջրի սակավության պատճառով: Բնակչության մի զգալի մաս՝ մոտ 300 տնտեսություն, ոռոգման ջրի իր կարիքները հոգում է Արգիճի գետից ինքնաշեն (առանց ջրօգտագործման համապատասխան թույլտվության) համակարգերի օգտագործմամբ, սակայն նրանք հիմնականում մնում են առանց ջուր «Արգիճի» փոքր ՀԵԿ-ի և այլ ջրօգտագործողների կողմից ոռոգման սեզոնին գետից ջրառի արդյունքում:

### **ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ**

Ընկած է Սևանա լճից հարավ-արևմուտք: Գյուղի միջով հոսում է Արգիճի գետը, որի երկարությունը 51 կմ է, ջրահավաք ավազանը՝ 384 կմ<sup>2</sup>, գետի տարեկան միջին ծախսը 5,18 մ<sup>3</sup>/վ է, հոսքը՝ 163 միլիոն մ<sup>3</sup>:

Համայնքի բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հողագործությամբ, վարձու աշխատանքով: Մշակում են կարտոֆիլ, ցորեն, գարի, կաղամբ: Պահում են խոշոր և մանր եղջերավոր անասուններ:

Բնակչության թիվը՝ 4446 մարդ, որից տղամարդիկ՝ 2378, կանայք՝ 2068, թոշակառու՝ 645, գործազուրկ՝ 200 հոգի: Համայնքն ունի 2 դպրոց՝ 576 աշակերտով, մանկապարտեզ՝ 130 սանով, բուժ կետ:

Համայնքի խնդիրներն են՝ գործազրկությունը, արտագնա աշխատանքի մեկնողների մեծ թվաքանակը, զգալի քանակությամբ հողերի անջրդեղիությունը, աղքատության շարունակվող աճը, միգրացիան, ոռոգման ջրի պակասը<sup>1</sup>:

### **ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ**

<sup>1</sup> <http://gegarkunik.mtad.am/files/docs/46365.pdf>

Գյուղը հյուսիսից սահմանակից է «Սևան» ազգային պարկին, արևելքից՝ Մարտունի քաղաքին, հարավից՝ Գեղհովիտ համայնքին, հարավ-արևմուտքից՝ Վերին Գետաշեն համայնքին, հյուսիս-արևմուտքից՝ Լիճք գյուղական համայնքին: Համայնքով հոսում է Արգիճի գետը:

Համայնքի վարչական տարածքը 2578, 49 հա է որից 1079 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, այդ թվում վարելահողեր՝ 539,18 հա, արոտավայրեր՝ 470 հա, խոտհարկեր՝ 13.97հա, այլ հողատեսքեր՝ 56.82 հա:

Բնակչության թիվը՝ 8785 մարդ (2018 թ), տնային տնտեսությունների թիվը՝ 2468, ընտանեկան նպաստառուների թիվը՝ 400 ընտանիք, կենսաթոշակառուների քանակը՝ 926 հոգի:

Համայնքի տարածքում գործում է երկու միջնակարգ հանրակրթական դպրոց, որտեղ սովորում է 1323 աշակերտ: Գործում է մեկ մանկապարտեզ, որն ունի 130 սան:

Գործում է բժշկական ամբուլատորիա: Համայնքի տարածքում առկա են քազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ:



### **Նկար 1. Ներքին Գետաշենի ամբուլատորիա**

Համայնքի բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հողագործությամբ, վարձու աշխատանքով:

Ներքին Գետաշենը չի դասվում գյուղատնտեսական մթերքներ արտադրող գյուղերի շարքին: Այգիները հիմնականում հիմնվել են ավելի քան 40 տարի առաջ և ներկայումս չեն ծառայում իրենց նպատակին, իսկ վարելահողերի մեծ մասը ոռոգման ջրի աղության, հողի ոչ բերրի լինելու հետևանքով դարձել է արոտ, քանի որ որպես անջրդի վարելահող օգտագործելը եկամտաբեր չէ: Արդյունքում համայնքի գյուղացիական տնտեսություններից տարիների ընթացքում հող մշակողների թիվը կրճատվել է:

Համայնքի խնդիրներն են՝ բնակչության արտագաղթը, ոռոգման և խմելու ջրագծերի մաշվածությունը, նոր ձևավորվող բնակելի թաղամասերում ենթակառուցվածքների՝ էներգամատակարարման, գազամատակարարման, խմելու և ոռոգման համակարգերի բացակայությունը, կոյուղու բացակայությունը, միջբնակավայրային հասարակական տրանսպորտի բացակայությունը, համայնքում

արտադրված գյուղատնտեսական մթերքներ իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաթիվ խնդիրների ու դժվարությունների առկայությունը<sup>2</sup>:

## **ՀԱՄԱՅՆՔՈՒՄ COVID 19–Ի ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ**

1. Արտագնա աշխատանքի մեկնելու սահմանափակման արդյունքում 1000 մարդ (մոտ 500 ընտանիք) մնացել է Վերին Գետաշենում, ինչի հաշվին աճել է գործազրկությունը:
2. Ավելացել են լրացուցիչ սոցիալական խնդիրներ, տեղի է ունեցել բնակչության եկամուտների կորուստ:
3. Կրճատվել են սպասարկման ոլորտի բիզնես ծառայությունների աշխատանքերի ծավալները, տեղի է ունեցել փոքր ու միջին բիզնեսի գործունեության ծավալների կրճատում:
4. Հեռավար եղանակով ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերման համար բնակչության շրջանում առաջացել է լրացուցիչ ծախսերի անհրաժեշտություն:
5. COVID 19-ի դեմ պայքարում տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ներուժի չօգտագործման հետևանքով համավարակի դեմ ձեռնարկված միջոցառումները լիովին չեն իրագործվում:
6. Բնապահպանական, այդ թվում նաև Սևանա լճի աղտոտման խնդիրների նկատմամբ բնակչության շրջանում ձևավորվել է պասսիվ վերաբերմունքի մթնոլորտ:

## **ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Համայնքների վրա էական ազդեցություն է գործում «Հիդրոկորպորացիա» ՓԲԸ-կողմից շահագործող «Արգիճի» ՓՇԷԿ-ը, որը կառուցված է Սևանա լիճ թափվող Արգիճի գետի վրա: ՓՇԷԿ-ը շահագործման է հանձնվել 2013 թվին: Ջրօգտագործման թույլտվության ժամկետը տրված էր մինչև 26.03.2017թ., որն, ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, երկարացված է: Իսկ ընկերության լիցենզիայի գործողության ժամկետն ավարտվում է 20.11.2028թ-ին: «Արգիճի» ՓՇԷԿ-ի ջրառը տարեկան կազմում է 50,1մլն/իս, բնապահպանական թողքը՝ 1իս/վրկ: Համաձայն իր ջրօգտագործման թույլտվության՝ ՓՇԷԿ-ն օգոստոս ամսին չպետք է աշխատի: Մինչդեռ ԷկոԼուրի տեսախցիկը 2020թ-ի օգոստոս ամսին ֆիքսեց ՓՇԷԿ-ի աշխատանքի փաստն այդ օրերին, ինչը ջրօգտագործման թույլտվության պահանջի խախտում է<sup>3</sup>: Նշենք, որ ՓՇԷԿ-ը 2019թ-ի օգոստոսին նույնպես աշխատել էր օգոստոսին, ինչի համար ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինն ընկերության նկատմամբ կիրառել էր վարչական տուգանք<sup>4</sup>:

<sup>2</sup> <http://gegharkunik.mtad.am/files/docs/36829.pdf>

<sup>3</sup> <https://www.ecolur.org/hy/news/water/12628>

<sup>4</sup> <https://www.ecolur.org/hy/news/officials/12683/>

Արգիճի գետում կարող են հանդիպել՝ կարմրախայտը Սևանի բեղաձուկը, Սևանի կողակը գեղարքունին (գրանցված են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում):

2016թ. «Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» ծրագրի<sup>5</sup> շրջանակներում «Արգիճի» ՓՀԷԿ-ում էկոԼուրի կատարած հետազոտությունների արդյունքում պարզվել են մի շարք հանգամանքներ.

- ՓՀԷԿ-ի ջրօգտագործման թույլտվությամբ տրված հիդրոլոգիական տվյալները ոչ-հավաստի են, ինչը ՓՀԷԿ-ի շահագործման ժամանակ հանգեցնում է բնապահպանական ռիսկերի, մասնավորապես, ջրառից հետո գետի բնապահպանական թողքի սխալ հաշվարկման, ազդակիր համայնքներում ռոռգման ջրի պակասի:
- Ընկերության կողմից ամռան ռոռգման սեզոնին բնապահպանական հոսքը չէր պահպանվում:
- Ջրառի կետն ապահովված չէր ջրաչափական սարքավորումով:
- Գլխամասի ճաղավանդակներից հանված ջրաբերուկները կրկին թափվում էին գետ՝ կրկին աղտոտելով այն:
- Ձկնանցարանը չէր ապահովում ձկների բնականոն անցումը:



Նկար 2. «Արգիճի» ՓՀԷԿ-ի գլխամաս

«Արգիճի» ՓՀԷԿ-ի շահագործման հետևանքով Վերին Գետաշեն համայնքի 350 հա հողատարածքն արդեն 7 տարի շարունակ անջրդի է՝ 2013 թ. սկսած: Ըստ Վերին Գետաշենի համայնքապետ Տիգրան Մուրադյանի. «ՓՀԷԿ-ի տնօրինությունն իր պարտավորությունները պատշաճ չի կատարել: Պայմանագիր կար, ստորագրվել էր կողմերի համաձայնությամբ, որ համայնքի վարչական տարածքի սկզբնամասում,

<sup>5</sup> <https://www.ecolur.org/files/uploads/pdf/dzernarkhayeren.pdf>

որտեղով անցնում էր ՓՀԵԿ-ի խողովակաշարը, ոռոգման սեզոնին իրենք պարտավորվել էին 300 լ/վրկ ինքնահոս ջուր ապահովել: Մոտ 150 հա-ի համար ջուր պետք է տար գլխամասից: Պարտավորությունը չեն կատարել. այդ ջրթողը տեղափոխվել է այլ հատված պոմպակայանների համար: Իջեցրել են ներքև: Մենք պոմպակայան ենք դրել, պոմպակայանով մղում ենք վերև, ինչը հավելյալ ծախս է ազգաբնակչության համար»:



### **Նկար 3. Զրույց Վերին Գետաշենի համայնքապետ Տիգրան Մուրադյանի հետ**

Պոմպակայանի աշխատանքի արդյունքում հնարավոր է լինում ոռոգել համայնքի միայն մոտ 150 հա հողատարածք, մնացած 350 հա-ը բացարձակ անջրդի է: 2017 թվականին Վերին Գետաշենի համայնքապետարանը ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից ստացել է տարեկան 155,5 մ<sup>3</sup> չափով ոռոգման ջրի թույլտվություն մինչը 2020թ. մարտ ամիսը գործողության ժամկետով, սակայն այդ ջուրը չի բավարարում:

Ըստ համայնքապետի՝ Վերին Գետաշենի 10-12 սեփականտերերի տնամերձ հողատարածքներում տեղադրված են ընկերության էլեկտրատյուները, բայց այդ մարդկանց հետ որևէ պայմանագիր մինչ օրս կնքված չէ: Որևէ փոխհատուցում չի տրամադրվել: Պատշաճ փոխհատուցում չեն ստացել նաև այն գյուղացիները, որոնց հողատարածքներով «Արգիճի» ՓՀԵԿ-ի շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ անցել է ընկերության տեխնիկան, ինչպես նաև անցկացվել է ՓՀԵԿ-ի խողովակաշարը:

2016թ. իրականացված «Աջակցություն փոքր ՀԵԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» ծրագրի շրջանակներում արձանագրված հիմնական բնապահպանական խնդիրները չեն լուծվել:

**ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՄԲ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Սույն Ծրագրի շրջանակներում անցկացված հարցազրույցին Վերին Գետաշեն և Ներքին Գետաշեն համայնքներից մասնակցել է 16 բնակիչ: Կատարված հարցազրույցների վերլուծությամբ պարզվեց հետևյալը՝

➤ **Սոցիալական ոլորտ**

1. Հարցմանը մասնակցած բնակիչները նշել են, որ սոցիալ-տնտեսական կյանքի դժվարությունները կապված են աշխատատեղերի բացակայության, կատարված աշխատանքի դիմաց ստացված ոչ-համարժեք, ցածր աշխատավարձի, ստացված գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարությունների հետ:
2. Հարցման մասնակիցները նշել են, որ COVID-19-ով պայմանավորված նվազել են իրենց ընտանիքների եկամուտները, քանի որ կրճատվել են իրենց աշխատավայրերի՝ սպասարկման ոլորտի ծառայությունների ծավալները:
3. Հարցվածները մեծամասամբ նշել են, որ իրենց ընտանիքների անդամներն արտագնա աշխատանքի էին մեկնում արտերկիր, սակայն այս տարի, պայմանավորված համավարակով, չեն մեկնել, ինչի արդյունքում նվազել են իրենց ընտանիքների եկամուտները և չմեկնած անձինք կա՛մ մնացել են պարապ, կա՛մ էլ ունեն թեթև զբաղվածություն ընտանեկան գործերում:
4. Քանի որ հարցվածները հիմնականում գործազուրկներ էին, նրանք՝ բոլորը, COVID-19-ով պայմանավորված, արտակարգ դրության օրերին աշխատատեղեր կորցնելու, կամ աշխատավարձերի կրճատման վերաբերյալ հարցերին տվել են բացասական պատասխան:
5. Գյուղատնտեսական աշխատանքների վրա COVID-19-ը թողել է նվազ ազդեցություն, քանի որ ֆերմերները բաց տարածքում են իրականացրել իրենց աշխատանքները չհաշված սերմնացու ձեռք բերելու գործընթացում ծագած խնդիրները:

➤ **Բժշկական սպասարկման ոլորտ, բժշկական հաստատությունների վիճակը**

1. Կորոնավիրուսային համավարակի մասին բնակչության իրազեկվածության մակարդակը բավականին բարձր է: Գիտեն ախտանշանների մասին, գիտեն իրենց գործողություններն այդ պարագայում: Ըստ հարցման մասնակիցների՝ իրենք հետևում են հակահամաճարակային կանոններին, կրում են շնչադիմակ, ախտահանում են ձեռքերը, օդափոխում են սենյակը, վարակվածության կասկածի դեպքում մեկուսանում են ընտանիքի անդամներից, զանգահարում են ընտանեկան բժշկին, կամ կանչում շտապօգնություն: Գիտեն, թե իրենց ինքնամեկուսացման օրերին ով պետք է իրենց օգնի (50%-ը նշել է ազգականին, 50%-ը չգիտի): Սակայն հակահամաճարակային կանոնները ոչ բոլորն են պահպանում: Այդ կանոնները հատկապես խախտվում են տարբեր մարդաշատ միջոցառումների, հատկապես հուղարկավորությունների ժամանակ, ինչն էլ վարակի տարածման պատճառ է հանդիսացել:
2. Հարցվածների 42,85 %-ը պատասխանել է, որ առողջական խնդիրներ ունենալու դեպքում դիմում է համայնքային բուժկետ, 42,85 %-ը՝ համայնքային բուժսպասարկման կետ և մարզային առողջապահական կենտրոններ, իսկ 14,28%-ը՝ մարզային և Երևանի առողջապահական կենտրոններ: Համայնքում գործող բուժսպասարկման կետի կողմից

կազմակերպված COVID -19-ի իրավիճակի պահանջներին համապատասխան բուժսպասարկումից գոհ է հարցվածների 71,5%-ը, իսկ 28,5%-ը դժգոհ են:

➤ **Պետական, ՏԻՄ և մասնավոր հաստատություններից ստացվող աջակցության նկարագիրը**

1. ՀՀ կառավարության կողմից իրականացված COVID-19-ի մեղմման սոցիալական ծրագրերից օգտվելու ժամանակ ծագած խնդիրների վերաբերյալ հարցին, հարցված բնակիչները նշեցին, որ չեն բախվել որևէ դժվարության, սակայն 10,0%-ը նշել է, որ օժանդակության տրամադրման գործընթացում տեղի են ունեցել անհարկի ձգձգումներ:

2. Հարցվածների գերակշիռ մասը պատասխանել է, որ չի օգտվել ՀՀ կառավարության Կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերով սահմանվող օժանդակություններից, բացառությամբ բնական գազի մատակարարման և էլեկտրական էներգիայի մատակարարման դիմաց և 0-18 տարեկան երեխա ունեցող ընտանիքներին տրված միանվագ դրամական օժանդակություններից:

3. Վերին Գետաշենի համայնքապետը նշեց, որ օժանդակել է տարբեր կազմակերպությունների կողմից տրամադրված օգնության բաշխման գործընթացին: Իսկ համայնքապետարանն օգնություն չի տրամադրել, քանի որ համայնքային բյուջե հարկային մուտքերի նվազման պատճառով հնարավոր չէր այն կազմակերպել:

4. «Հիդրոկորպորացիա» ՓԲԸ-ն COVID-19-ի պայմաններում համայնքին աջակցություն չի ցուցաբերել:

➤ **Ուսուցման կազմակերպումը**

COVID-19-ի պայմաններում ներդրված հեռավար ուսուցման հետ կապված հարցվածների 14,3 %-ը նշեցին, որ իրենց երեխաները ստացել են լիարժեք կրթություն, դժվարություններ չեն կրել , 42,85%-ը նշել են, որ ունեցել են դժվարություններ պայմանավորված համապատասխան տեխնիկայի բացակայությամբ, ինտերնետային կապի խափանմամբ, ինտերնետի համար լրացուցիչ ֆինանս չունենալով, ապրած սթրեսների, աշակերտ-ուսուցիչ ուղղակի շփման խոչընդոտի չհաղթահարմամբ, ստացած կրթության ցածր որակով: 42,92%-ը դժվարացել է հարցին պատասխանել:

➤ **Շրջակա միջավայրը**

1. Հարցվածների 70%-ը նշել է, որ առաջացել է շրջակա միջավայրի աղտոտման նոր վտանգավոր դրսևորում, մասնավորապես, համայնքի տարածքը և Սևանա լճի ափամերձ տարածքներն աղտոտվում են օգտագործված դիմակներով և ձեռնոցներով:

2. Հարցվածների միայն 15,0 %-ն է նշել, որ համավարակի պայմաններում պատկան մարմինները պատշաճ ձևով արձագանքել և լուծում են տվել իրենց բարձրացրած սոցիալ-էկոլոգիական խնդիրներին, իսկ 25,0 %-ն էլ պատասխանել է, որ իրենց բարձրացրած հարցերը չեն ստացել արձագանք, մնացած 65,0 %-ը հարց չի բարձրացել:

3. Նվազել է համայնքային խնդիրների շուրջ տեղի ունեցող հանրային կարծիքի արտահայտման հնարավորությունը, քանի որ ստեղծված իրավիճակում ժողովրդի կարծիքն իմանալու համար հանրային լսում կազմակերպելը դարձել է անհնարին: Բոլոր



դեպքերում համայնքապետը հավաստիացրեց, որ բնակիչների ընդհանուր կարծիքի մասին տեղյակ են:

4. «Արգիճի» ՓՇԷԿ-ի գործունեությունն, ըստ հարցվածների 60,5 %-ի, ազդում է իրենց գյուղատնտեսական աշխատանքներից ստացված եկամուտների վրա, քանի որ կրճատվել է ռոտովոդ հողատարածքների մակերեսը, ամռան սեզոնին ռոտովոդի ջրի պակասի արդյունքում բերքը չորանում է, կրճատվել են արոտավայրերը: Մնացած 39,5 %-ի վրա չի ազդում, քանի որ իրենց տնտեսական գործունեությունը չի առնչվում ՓՇԷԿ-ի գործունեության հետ:

## ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

- Նոր աշխատատեղերի ստեղծման և հատուկ ծրագրերի շեշտադրմամբ քննարկել համայնքների զարգացման ծրագրերը՝ գործընթացին մասնակից դարձնելով տեղի բնակիչներին, այդ թվում՝ վերադարձած աշխատանքային միգրանտներին:
- Համայնքներում բավարար աշխատատեղեր ապահովող արտադրություններին ցուցաբերել պետական օժանդակություն՝ վերադարձած աշխատանքային միգրանտներին այդ աշխատանքներում ներգրավելու նախապայմանով:
- Օգտագործել Մարտունու տարածաշրջանի ուժեղ կողմերը, մասնավորապես, զարգացնել տուրիզմը:
- Հանրապետության համար Սևանա լճի ռազմավարական նշանակությունը հաշվի առնելով՝ գտնել ֆինանսավորման աղբյուրներ ավիամերձ բնակավայրերի կոյուղացման և դրանք կենսաբանական մինի մաքրման կայաններով ապահովման համար:
- Քանի որ Սևանա լճից ձկները ձվադրման նպատակով բարձրանում են Արգիճի գետի վերին հոսանքներ, ուժեղացնել պետական վերահսկողությունը «Հիդրոկոորպորացիա» ՓԲԸ-ի գործունեության նկատմամբ, որպեսզի նրա կողմից պահպանվեն բնապահպանական և բնական ռեսուրսների օգտագործման համար սահմանված բոլոր սահմանափակումները, տալ ժամանակ արձանագրված խախտումները վերացնելու համար, հակառակ պարագայում օրենքով սահմանված կարգով դադարեցնել նրա գործունեությունը, ընդհուպ գործունեության լիցենզիայից զրկելը:
- Ապահովել բնակչության համատարած թեստավորում, այդ ընթացքում սահմանել թեստավորման դիմաց վճարման արտոնություններ բնակչության անապահով խավերի համար:
- Շարունակել տեղեկատվության տրամադրումը համավարակի վերաբերյալ, կարևորել բնակչության շրջանում սոցիալական ինքնագիտակցության բարձրացմանն ուղղված քարոզարշավի անհրաժեշտությունը՝ բարձրացնելով անձի սոցիալական պատասխանատվության ենթամշակույթը:
- Ուժեղացնել մեկուսացման մեջ գտնվող COVID-19-ով վարակակիրների նկատմամբ վերահսկողությունը: